Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՍՍԳ ԳԱ ակադեմիկոս

ԱՍՔԱՆԱԶ ՄՈՌԱՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հայաստանում սովետական կարգեր սահմանվելու վաղորդայնին Ասքանազ Մոռավյանը մտավ Հեղկոմի հանրածանոթ վեցյակի մեջ։ Մինչդեռ Հեղկոմի անդամներից ոմանք գրեթե չերևացին Հայաստանի հորիզոններում, իսկ մյուսները հազիվ մի քանի ամսվա մասնակցություն ունեցան Հեղկոմի գործունեության մեջ, Մռավյանը միակն էր, որ 1920 թվականի վերջերից մնաց և գործեց Հայաստանում ղեկավար դիրքերում մինչև իր մահը՝ 1929 թվականի հոկտեմբեր ամիսը։

Կարծում եմ պատահական երևույթ չէր այս։ Նա այն գործիչն էր հենց, որը սկզբից ևեթ ամուր կապված էր ոչ միայն բոլշևիկյան կուսակցության Անդրկովկասյան գլխավոր հանգույցների՝ Թիֆլիսի և Բաքվի, այլև Երևանի հետ։ Երևանում նրան հանդիպում ենք 1905 թվականին, երբ դեռ նոր էր անցել մեր կուսակցության շարքերը։ Այդ օրից ի վեր Մռավյանը թեպետև գործում էր Անդրկովկասի մյուս կենտրոններում, սերտ կապված էր Հայաստանի բանվորության և կուսակցական կազմակերպության հետ։

Երկրի ու նրա մարդկանց հետ նրա առնչությունը սոսկ գաղափարական չէր։ Նա կենդանի ու գործարար շփում ուներ բանվորների հետ, կապված էր ոչ միայն գաղափարակից ընկերների, այլև աշխատավոր զանգվածների հետ։ Սրտին մոտ էր ընդունում Հայաստանի կազմակերպության կենսական հարցերը, բանվոր զանգվածների կարիքներն ու հոգսերը և չէր խնայում ջանք ու եռանդ ձեռքից եկած օգնությունը հասցնելու կամ ջերմ ու համակող իր խոսքով ճիշտ կողմնորոշում տալու նրանց։

Մռավյանը մտավորապես զարգացած, ներգործուն մտքի, աշխույժ ու որոնող խառնվածքի տեր պրոֆեսիոնալ հեղափոխական էր։ Նրա մտահորիզոնը լայն ընդգրկումներ ուներ։ Հետևում էր ոչ միայն սովետական երկրի, Անդրկովկասի կամ Հայաստանի առօրյա կյանքին, այլև վառ հետաքրքրությամբ զբաղվում միջազգային քաղաքականության հարցերով։ Պատահական չէ, որ մի պահ նա վարում էր Սովետական Հայաստանի արտաքին գործոց ժողկոմատը։ Անմոռանալի են 1921 թվականի սկզբներին մեծ ցասումով գրված նրա նոտաները, ուր մերկացնում էր ու բողոքարկում թուրք փաշաների Հայաստանի օկուպացված վայրերում տարած հայաջինջ քաղաքականությունը։ Հուզաթաթավ գրչով շարադրված բազմաթիվ հրապարակախոսական, գրական, քննադատական և պոլեմիկական հոդվածներ ունի նա, ինչպես նաև էջեր՝ նվիրված քաղաքական, գրական և կուլտուր-լուսավորական խնդիրների լուսաբանության կամ կուսակցության պատմությանն ու նրա գործիչների կյանքին։

Սակայն գրչի մարդ կամ հրապարակախոս լինելուց առավել անձնվեր ու աննկուն պրակտիկ գործիչ էր նա, ներքին հույզերով և աղնիվ մղումներով լի բոլշևիկ ղեկավար, որը անձնվիրաբար պայքարում էր մեր երկրում աշխատավոր ժողովրդի ազատագրման և կոմունիզմի հաղթանակի համար։

1921 թվականի սկզբներին Մռավյանի տաք ու հուզառատ բնավորությունը հատկանշող ելույթները մոլեգին, բայց և ապարդյուն ջանքեր էին՝ փարատելու քաղաքացիական պատերազմի համար խտացող այն մթնոլորտը, որը հանգեց դաշնակցականների հերթական արկածախնդրությանը՝ Փետրվարյան ապստամբությանը։ Հիշում եմ, որ Կենտկոմի նիստերից մեկում նա կարդաց իր հետ Մոսկվայից բերած չորս էջանոց մի գրություն, որ կազմել էր Վալամ Ավանեսովը, Լենինի գրույցների ու ցուցումների հիման վրա ձևակերպելով այն սկզբունքները, որոնցով, նրա կարծիքով, ղեկավարվելու էին Կովկասի ընկերները։ Կովկասյան քաղաքականության այդ սկզբունքները մասամբ հիշեցնում էին այն նամակը, որ ամիսներ անց Կովկաս բերեց Մյասնիկյանը։ Սակայն Ավանեսովի ձեռքով շարադրած հանձնարարականները չունեին հարկ եղած կշիռ Ավիս-Կոստանյանի քաղաքական ընթացքը՝ նոր հունի մեջ դնելու համար և Մռավյանի բորբոքված ձայնը միայն տարակուսանք արտահայտող բացականչությունների հանդիպեց Կենտկոմի նիստում։

Դժբախտաբար, կյանքի վերջին երկու-երեք տարիներին բավականաչափ բեկված էր Մռավյանի գործունեության մարտական թափն ու շունչը։ Անհատի պաշտամունքի աճող ճնշումը սկսում էր զգալի դառնալ նաև Հայաստանի կուսակցության կյանքում։ Գաղափարաբանական բարդ խնդիրները տեսական հարցերում սակավապետ ընկերները սկսում էին որոշվել ապակողմնորոշող «մշակումների» կամ մեքենայական յվեարկության ճանապարհով։ Այս իրադրության մեջ հետզհետե խամրել էր ու իջել նաև Մռավյանի վաղեմի անմիջականությունն ու համարձակությունը։

Հարկադրանքի և համոզումների բախումը սրում էր նրա հոգեկան դրամա, մաշում ու քայքայում նրա հիվանդ սիրտը՝ պատճառ դառնալով վաղահաս մահվան։

Անժամանակ կտրվեց Ասքանազ Մռավյանի կյանքի թելը։ Սակայն նրա պայծառ անունը, զգայուն ու վճիտ նրա նկարագիրը անջինջ է մնում նրանց սրտերում, ովքեր հանդիպել ու ճանաչել են նրան և մանավանդ նրանց, ովքեր գործել են նրա հետ և վայելել նրա մտերմությունը։